

Ռոզա Խարազյան Ասփղիկ Բալայան

«ԱՌՎԱԿ» ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ինքնուրույն
ընթերցանության նյութեր
4-րդ դասարանի համար



ԵՐԵՎԱՆ
«ՀԱՇ ԸՆԴ ՀԱՇ ՓՐԻՆԹ» ՍՊԸ
2017

Երկու խոսք

Սիրելի՛ բարեկամ,

Մենք կրկին հանդիպեցինք: Նախորդ դասարաններում դու ծանոթացել ես «Առվակ» ընթերցարանի երկու գրքերին: «Առվակ 4» ընթերցարանն իր բնույթով մի քիչ տարբերվում է նրանցից: Քանի որ դու արդեն մեծ ես և ավելի գիտակցորեն ու արտահայտիչ ես կարդում, նյութերն այստեղ փոքր-ինչ ծավալուն են. հիմնականում հատվածներ են տարբեր վեպերից, վիպակներից ու պատմվածքներից: Ցանկության դեպքում դու կարող ես ստեղծագործությունները կարդալ ամբողջությամբ: Դրանք անպայման կհետաքրքրեն քեզ, կմղեն մտածելու, ստեղծագործելու, կապահովեն քո հաճելի ժամանցը:

Մեծացել ու փոխվել են նաև քո հետաքրքրությունները: Դա նկատի ունենալով՝ «Առվակ 4» ընթերցարանում տեղադրվել են ոչ միայն գեղարվեստական, այլև ուսումնաճանաչողական նյութեր, որոնք քո մեջ շատ ու շատ հարցեր կառաջացնեն: Ժամանակն է, որ հանրագիտարաններ կարդաս, ինքնուրույն բացահայտես աշխարհը, սիրես ու ավելի լավը դարձնես այն...

«Առվակ 4» ընթերցարանը նույնպես կազմված է թեմատիկ խմբերից՝ «Կյանքի դասեր կամ չժերացող արժեքներ», «Հանելուկ բնությունը», «Երգեր հայի ու հայկականի մասին», «Ինչո՞ւ է այդպես...», «Խաղիկներ»:

«Հանելուկ բնությունը» թեմատիկ խմբում ընդգրկված են բնությանը և բնական գիտություններին վերաբերող նյութեր, որոնք նպատակ ունեն զարգացնելու և խորացնելու քո պատկերացումները շրջապատի բնության տարրերի ու երևույթների վերաբերյալ: Այլ բաժիններում ևս կարող ես հանդիպել բնությանը վերաբերող նյութերի:



ՍԻՐՈ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԹԱԿՈՅՈՎ

(ըստ Հասմիկ Հակոբյանի)



ըբա՛ն լավն է գարնանային անտառը, երբ շուրջդ բոլոր-բոլորը՝ շնչավոր թե անշունչ, մարդ, գազան, թռչուն թե ծառ ու ծաղիկ, բնության զարթոնքն են դիմավորում, ու սիրով է շնչում անեն ինչ...

Ահա գարնանային սովորական աղմուկի մեջ կկվի ձայնն է լսվում, որին, հավանաբար, իր ծագերի ճակատագիրն է մտահոգում, իհարկե, միայն այնքանով, թե այս տարի ում պետք է դարձնի նրանց հոգևոր ծնողները, ում բնի մեջ պետք է դնի ձվերը: Լսվում է սոխակի հոգեհմա երգը, որը երբեմն ընդհատվում է, երբ թռչունը միջատներ է որսում և ուտում: Եվ այսպես, դայլայլում են, երգում, ճռվողում ու ծլվլում մյուս թռչունները: Ու թնդում է անտառում գարնանային համանվազը, որի մեջ ասես հարվածային գործիքներն են տիրապետում: Այդ փայտփորիկներն են ջանադրությամբ թմբկահարում, իրենց ամուր կտուցի և վզի հզոր մկանների շնորհիվ փորում ծառերի կեղևն ու բնափայտը՝ փնտրելով միջատներ: Աննկատ մնալով՝ տեսել են, թե ինչպես են միջատները կաշում փայտփորիկի լեզվին ու կեր դառնում նրա համար: Տեսել են նաև փայտփորիկների նոր ծնված ծագերին, որոնք ձվից դուրս են գալիս փակ աչքերով: Փայտփորիկների մի մասն ունի կարմիր գլխարկ ու կարմիր փորատակ, մյուսների գլուխները սև են, իսկ փետուրները՝ մոխրագույն կամ նույնիսկ կանաչավուն:

– Ավի՛կ, ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ են փայտփորիկները թակում ծառերը,– մի օր անտառում, ասես մտքերս կարդալով,– հարցրեց պապս:

– Սնունդ են փնտրում, պապի՛,– անփութորեն պատասխանեցի ես՝ մի քիչ վիրավորված այդ հեշտ թվացող հարցից:

– Այդպես է ամբողջ տարվա ընթացքում, իսկ հիմա՞:

Ես լրջանալով մի քիչ մտածեցի:

– Հավանաբար բույն են պատրաստում իրենց համար:

– Դա էլ ճիշտ է, բայց մի՛ մոռացիր, որ հիմա գարուն է, գույգեր կազմելու ժամանակը:

Ես գարմանքով պապիս նայեցի. մի՞թե փայտփորիկները ծառը փորելով են իրենց հարսնացուներին հրապուրում, կանչում:



ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՄՐՑԱՎԱՐԻ ՍՈՒԼԻՉԸ

Մինչև 1878 թվականը ֆուտբոլային մրցավարը չէր վազվզում դաշտում, ինչպես հիմա, այլ վարում էր խաղը տրիբունայից՝ բազկաթռռին բազմած: Սակայն յնտեղից կանոնների ամեն խախտում չէ, որ հնարավոր էր նկատել. դրա համար էլ որոշվեց մրցավարին դաշտ իջեցնել: Եվ հենց յստեղ էլ սպորտի պատմության համար ուսանելի միջադեպ տեղի ենցավ: Մի անգամ խաղը վարում էր մի ոստիկան: Եվ այնպես պահեց, որ հենց այդ խաղի ժամանակ դաշտում բուռն քաշկռտուք կսվեց:

Մրցավարն իրեն չկորցրեց. ժամանակին հիշելով իր ծառայության պարտականությունները՝ գրպանից հանեց ոստիկանական սուլիչը, և դաշտով մեկ հնչեց սպառնալից սուլոցը: Կռվարարները հանկարծակիի եկան, շփոթված կանգնեցին, և կարգուկանոն արագ վերականգնվեց:

Հենց այդ ժամանակից էլ ֆուտբոլային բոլոր մրցավարները «զինվեցին» սուլիչներով:

ԱՐԵՓԱԿՆ ՈՒ ՄԵՆՔ

(ըստ Արարատ Եղիկյանի)



Արեգակը սովորական աստղ է՝ գիշերային երկինքը զարդարող այլ աստղերից ոչնչով չտարբերվող: Այն գազի շիկացած հսկայական գունդ է, որը Երկրից հեռու է 150 մլն կմ: Արեգակի մակերևույթի ջերմաստիճանը 6 հազար աստիճան է, իսկ նրա ընդերքում՝ կենտրոնին մոտ, հասնում է 16 միլիոն աստիճանի: Արեգակը ջերմություն ու լույս է տալիս և կարծես թե «հալվում» է՝ անընդհատ նվազեցնելով իր զանգվածը, սակայն այն այնքան վիթխարի է, որ կշարունակի դեռ երկար դարեր լուսավորել ու ջերմացնել...



**Ռոզա Խարազյան
Աստղիկ Բալայան**

«ԱՌՎԱԿ» ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

**Ինքնուրույն ընթերցանության նյութեր
4-րդ դասարանի համար**

**Խմբագիր՝ Աստղիկ Բալայան
Ձևավորումը՝ Վահագն Աբրահամյանի
Սրբագրիչ՝ Ռոզա Խարազյան**

**Տպագրությունը՝ օֆսեթ:
Չափսը՝ 70x100/16:
Ծավալը՝ 8.75 տ/մ:
Թուղթը՝ օֆսեթ 80 գ/մ²:
Տպաքանակը՝ 3000:
Տպագրված է «ՀԱՇ ԸՆԴ ՀԱՇ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում:**